ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մարտի 2015 թվական N 37–Ա

ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԱԳԱԹ>> ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԿԱՆԱՆՑ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթները և <<Ագաթ>> հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպության գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի մարտի 18-ին N 2884 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1. Բարեկարգելու և խաղահրապարակ կազմակերպելու նպատակով <<Ագաթ>> հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման տրամադրել հողամաս՝ Գյումրի քաղաքի Բաղրամյան փողոցի հարևանությամբ:
2. Սահմանել, որ.
   1) անհատույց օգտագործման տրամադրված հողամասի հատակագիծը տրամադրվում է Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից,
   2) հողամասի բարեկարգման և խաղահրապարակի կազմակերպման նախագիծը պարտադիր համաձայնեցվելու է Գյումրի համայնքի ղեկավարի հետ,
   3) հողամասի բարեկարգման և խաղահրապարակի կազմակերպման հետ կապված շինաշխատանքների պատվիրատու է հանդիսանում <<Ագաթ>> հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղրամյան _____		
Մ. Գաբոյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«25» մարտի 2015 թ.